

գակները վերստին բացին իրենց շրթները, թափելու համար ի սփիւռս աշխարհի ցիրուցան հայութեան ողբաշաղտերուն վրայ աւետիսը վերանորոգ հայրապետութեան, այն առտուն հայոց հայրենիքը աւելցաւ, աճեցաւ:

Իր դարերն էին որոնք ետ կը դառնային, մեր պատմութեան բոլոր սխրագին, սրտայոյզ գեղեցկութիւնները վերստին պարպելու, այդ ամէնուն համար ծարաւահիւծ մեր սիրտերուն:

Էջմիածնի զանգակներ, զիտէք թէ ինչպէս լսեցին ձեզ կայանին մէջ կոյր, անդամալոյծ, մահամերձ մեր ծերերը: Ի՞նչպէս դուք գտաք սրտին տաճարները մեր պարմաններուն: Ի՞նչպէս իջաք կոյս աւազաններուն մէջը մեր մանուկներու հոգիին:

Էջմիածնի զանգակներ, ձեզ չեմ նմանցներ գարունն աւետող ծայներուն. դուք մեզի դարձաք ոչ միայն իբրեւ մեր պատմութիւնը այդ առտու, այլ մեր շքեղ ապառնին:

Ձեր ծայնն է արբենի այն պողոտան, որուն վրայէն հանդերձուած է քալել հակատագիրը այս ժողովուրդին:

Ովսաննա ի մեռելոց յարուցելոյն:

ԵՂԻՎԱՐԴ

## Ն Ե Ր Կ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

### Ա

Կուգաս ինծի,  
Երբ պարտուած եմ ալ ինձմէ,  
Կամ երբ կ'իյնայ հովը ցուրտին  
Վըրան կըրակ իմ օտերուն:

Կուգաս ինծի,  
Անմոռեմի, երբ կործանած  
Լեռնէ յոյսիս, ու չեմ բաւեր  
Քեզ առնելու պարտանակիս:

Կուգաս ինծի,  
Մութէն մաղուած լոյս մը ինչպէս,  
Կաթիլ կաթիլ աստղանալու  
Վըրան պըղտաւ իմ մեղեքուն:

### Բ

Կը կարծէի,  
Հիւլէին մէջ գանկն ըլլայիք  
Դուն քսեղծած տիեզերքիդ.  
— Անհունէն վեր, անհունն է մարդ:

Կը կարծէի,  
Երանութեան խորհուրդն անհաս

Կալը մարդուն, ասողերէ ասող  
Եւ ըսփիւրէ մինչեւ ըսփիւր:

Բայց դուռն անա  
Գերեզմանին, ափ մը ծովէն  
Ժամանակին, որ կը լեցուի,  
Մարդոց բոլոր երազներով:

Մութ հողերէն  
Լոյսին նետուող ծիլը ինչպէս,  
Ես կը բացուիմ բու խորհուրդիդ՝  
Կայծի մ'անգոյն խորն հրդեհուող  
Երկինքներուն:

## Գ

Զի վեր քան մահ, երանութիւն,  
Գիրն է հակսին ըլլալ մարդուն:  
Դուն ես համբան, անգերեզման,  
Ուրկէ կուգանք մենք իրարու:

Ես՝ բարձրացող, թէ դո՞ւն՝ իջնող.

Մենք գիրկ գրկի, վեր անհունէն,  
Աւելի մօտ ենք իրարու:

Կուգաս ինծի, կուգամ քեզի,  
Փրօշած կասկած, փրօշած պատուար,  
Մանկան մը պէս որ կը վազէ  
Հեռուէն եկող ձայնին իր մօր:

ԵՂԻՎԱՐԴ

